

ԱՊՈՒՆԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԶԵՎԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԿՈՐՅՈՒՆԻ «ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ» ԵՐԿՈՒՄ

Ս. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը «հայոց գրականության սկզբնավորության միակ ժամանակակից և վավերական հիշատակարանն է»,¹ որը մեզ է հասել երկու տարբեր խմբագրությամբ՝ ընդարձակ և համառոտ, և խիստ արժեքավոր է լեզվաբանական տեսակետից, քանի որ հայոց լեզվի գրավոր շրջանի առաջին գործն է:

Հայերենի քերականական կառուցվածքին նվիրված հետազոտություններում միշտ առանցքային կարևորություն են ներկայացրել բայի անդեմ ձևերը, որոնց մի մասի մեջ բայական և անվանական հատկանիշների զուգահեռ առկայությունը մինչև այսօր էլ տարակարծությունների տեղիք է տալիս այդ բառերի կարգավիճակը, տեղն ու դերը որոշելու հարցում: Մեր հոդվածի նպատակն է ներկայացնել ապառնի և ենթակայական դերբայների գործածությունը Կորյունի երկում, դրանց բառակազմական, ձևաբանական, շարահյուսական բնութագրերը:

Ապառնի դերբայի՝ որպես անկախ դերբայ, ըմբռնմանը հայ քերականագիտության մեջ առաջին անգամ հասավ Ա. Բագրատունին, ով ապառնի դերբայն անորոշի և անցյալի հետ դիտեց որպես անկախ դերբայ, սակայն շարունակեց հայերենի դերբայների դասակարգման հիմքում ընդունել ժամանակի կարգը: Այս մոտեցմամբ էլ հայ քերականագիտությունն այս դերբային տվել է **ապառնի** անունը: Գրաբարում ապառնի դերբայը ձևավորվում է **-ng** և **-h** մասնիկներով, որոնք ավելանում են անորոշ դերբայի վրա: Անդրադառնալով ապառնի դերբայի սեռի քերականական կարգի հարցին՝ պետք է նշել, որ այն տարբեր մեկնաբանումներ է ստացել: Լատինաբան դպրոցի ներկայացուցիչները, հետագայում նաև Մառը, ապառնի դերբայի **-ng** և **-h** ձևերը դնում են լրացական բաշխման հարաբերության մեջ, այսինքն՝ ըստ նրանց՝ **-ng** մասնիկով կազմությունը ներգործական, երբեմն էլ չեզոք սեռի է, իսկ **-h** մասնիկով ձևը՝ կրավորական սեռի: Ա. Աբրահամյանը մերժում է այս երևույթի վերագրումը գրաբարին և հին մատենագրությունից բերված զգալի քանակությամբ փաստերով ցույց է տալիս, որ դերբայական երկու ձևերն էլ գործածվում են

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 177:

թե՛ ներգործական, թե՛ կրավորական սեռային իմաստներով: Թ. Շահվերդյանն իր «Գրաբարի դերբայները» գրքում եզմիկից բերված օրինակներով ցույց է տալիս, որ **-ոց** մասնիկով ապառնի դերբայն իսկապես հիմնականում ներգործական է և չեզոք, իսկ կրավորական օրինակներն այս պարագայում քերականական բացառություններ են: Ըստ նրա՝ **-ի** մասնիկով կրավորական ձևն իրոք ապառնի դերբայ է, իսկ ներգործականն ավելի շատ ենթակայական դերբայի իմաստ ունի՝ առանց ապառնիություն արտահայտելու»²:

Կորյունի «Վարք Մաշտոցի» երկում ապառնի դերբայի **-ոց** մասնիկով կազմությունը հանդես է եկել ինչպես չեզոք, այնպես էլ կրավորական և ներգործական սեռերի իմաստներով: Ահա թե չեզոք սեռի իմաստն ինչպես է դրսևորվել հիշյալ դերբայական ձևով....Որ առ երանելին Մովսես եկեալ... մատենագրել առ ի պահեստ յաւիտեանցն որ **գալոցն էին** (102): Առաւելագոյն իսկ վայելեալ ի հիւթ եւ պարարտութիւն վարդապետութեանն, յուղարկէ զերանելին՝ ուր եւ **երթալոցն էր** (120): Այժմ բերենք ներգործականի և կրավորականի օրինակներ՝ Ասացաք... յօրինակ քաջալերիչ՝ հոգեւոր ծննդոց իւրեանց, եւ որք նոքօք **աշակերտելոց իցեն** յազգս ազգաց(146): Պատմելով նմա յետաւետեացն ընկալելոց, զինչ ի Սողոմն **էր գործելոց** (76):

Ապառնի դերբայի **-ոց** մասնիկով կազմության ձևաբանական արժեքը բաղադրյալ ժամանակներ կազմելու մեջ է: Կորյունի երկում **-ոց** մասնիկով և **եմ** օժանդակ բայի ձևերով կազմվել են սահմանական եղանակի անցյալ ապառնի և ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի ժամանակներ: Օրինակներ՝ **սահմանական եղանակի անցյալի ապառնի** ... զինչ ի Սողոմն **էր գործելոց** (76), ...առ ի պահեստ յաւիտեանցն, որ **գալոցն էին** (102), ...յուղարկէ զերանելին, ուր եւ **երթալոցն էր** (120): Ինչպես երևում է բերված օրինակներից, ապառնի դերբայներով կազմվող այս բաղադրյալ ժամանակը գերազանցապես կիրառված է երկրորդական նախադասության մեջ: Այս ձևերը Կորյունը գործածել է միայն երրորդ դեմքով, և դրանք համապատասխանում են արդի հայերենի սահմանական եղանակի անցյալի ապառնի ժամանակին՝ **գալոցն էին**- գալու էին, **գործելոց էր**- գործվելու էր- **երթալոցն էր**- գնալու էր: **Ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի** ... որք նոքօք **աշակերտելոց իցեն** յազգս ազգաց(146):

Ինչ վերաբերում է **-ի** մասնիկով ապառնի դերբային, մշենք, որ Կորյունի երկում այն հանդես է եկել միայն ներգործական նշանակությամբ: Ներգործական սեռի **-ի** մասնիկով ապառնի դերբայները մեծ մասամբ ցույց են տալիս

² Թ. Շահվերդյան, Գրաբարի դերբայները. ձևաբանություն և շարահյուսություն, Երևան, 2001, էջ 87:

այնպիսի գործողություն, որ տեղի է ունենում ներկայում, և այս դեպքում ունենում են ենթակայական դերբայի իմաստ, սակայն երբեմն մաս ապառնիության իմաստը պահում են: Կորյունի երկում կան ապառնի դերբայի այսպիսի կիրառության վեց օրինակներ, որոնցից հինգում այն հանդես է եկել որպես հատկացուցիչ՝ դրվելով սեռական հոլովով՝ Քանզի ի տախտակացն խորտակելոց յայտնի եղեալ տեսանէք *բերելոյն* թախծութիւնն (100):...Եւ *զծախելեացն* յիշատակարան պատմեն ամենայն ուրեք՝ առ ի ներքոյ երկնից (78): Նաեւ զդանկաց երկուց ընծայելոցն գովէ *զարկանելեացն* յօժարութիւն առաւել քան զմեծացն (78): Այլ ինքն իւրով լցեալ հոգեւոր մխիթարութեամբ՝ կարծեալ *զընդունելեացն յօժարութիւնն* եւ *ընդունելեացն ուրախութեան* դասաւորութիւն ճանապարհացն աւետաբեր (100): Մեկ օրինակում հանդես է եկել որպես հանգման անուղղակի խնդիր՝ Անդ էր այնուհետեւ սրտալիր ուրախութիւն եւ ակնավայել տեսիլ *հայելոյն* (104): Իսկ *«խնդրելի»* բառի երեք ձևերում ապառնի դերբայը գործածվել է անցյալ դերբայի նշանակությամբ (այսինքն՝ աշխարհաբարի հարակատար դերբայի): Այն կատարում է ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոնը և դրվում հայցական հոլովով: Բերենք օրինակներ՝ Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտ *խնդրելին* (ուզածը, խնդրածը), հայցէին եւս յարքայէ մանկունս մատաղս (92): ...Ազդ առնէին ապա եւ զկանխագոյն *խնդրելին*(խնդրածը) իւրեանց թագաւորին Յայոց (90): Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յորում եւ յանձն առեալ ամենեցուն *զխնդրելին* (ուզածը) կատարել (110): Գրաբարում դերբայական այս ձևն արդեն գործառուում էր իբրև ածական, քիչ դեպքերում՝ իբրև գոյական: Կորյունը *երանելի* ապառնի դերբայից ծագած *երանելի* ածականը ածականաբար (որպես որոշիչ) գործածել է 25 անգամ, իսկ գոյականաբար՝ 18 անգամ: Բերենք ապառնի դերբայի՝ ածականի անցման օրինակներ՝ Յայնմ ժամանակի *երանելի* եւ *ցանկալի* աշխարհս Յայոց անպայման *սքանչելի* լինէր (104): Եւ ընկալեալ ողջոյն եկեղեցւոյն եւ *յերեւելի* իշխանաց քաղաքին, եւ ամենայն իւրայովքն յաջողեալք՝ ելանէին ի դեսպակս (116): Զի ոմն *ընդունելի* պատարագաւ արդար կոչեցեալ (72): Տեսիլ *սքանչելի* խաչանման լուսաւոր շողաւոր ձեւ երեւէր(140): Դերբայից առաջացած այս ածականները երբեմն գործածվում են գոյականաբար՝ *Եմթակա*՝ Եւ արդ եկեալ *յիշելին* մերծ ի թագաւորական քաղաքն... (102): ...Հոգ ի մտի արկանէր *սիրելին* Քրիստոսի եւ վասն բարբարոսական կողմանն(110): *Սեռականով Եմթակա*՝ Առեալ այնուհետեւ *երանելւոյն* զհաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ եւ յանդարման տեղիս Գողթան (88): Իսկ *երանելւոյն* վաղվադակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն... (88):

Ապառնի դերբայի *-ի* մասնիկով ձևը *եմ, լինիմ* բայերի եզակի և հոգնակի երրորդ դեմքի զուգորդությամբ կազմում է միադիմի բայ-ստորոգյալ՝ արտահայտելով կատարվելիք գործողության անհրաժեշտության գաղափար: Այս կիրառությամբ ապառնի դերբայը հանդես է գալիս որպես ստորոգելի: *եմ* բայի երրորդ դեմքն այստեղ համապատասխանում է *պետք է* հարկադրական նշանակությամբ: Իբրև ստորոգելի գործածվող *-ի*-ով վերջավորվող ապառնի դերբայը կարող է դրվել իր բայական հանգույցից և՛ առաջ, և՛ հետո: Կորյունի երկում ապառնի դերբայի այսպիսի կիրառության երեք օրինակ կա՝ ...ապաքեն առնե եւ ուսուցանե, եւ ոչ եթէ զի պարգեւեսցէ *իմանալի է* (132): ... զի ընդ միմեանց բարեխօսելն *գիտելի է* (132): Անդ *էր յիշելի* եւ մարգարեականն (106):

Ենթակայական դերբայը գրաբարի քերականության մեջ երկար ժամանակ կոչվել է «*ընդունելութիւն ներկայ*»: Ա. Այտընյանն այս դերբայն անվանում է սոսկ «*ընդունելութիւն*»³: Մ. Արեղյանն ընդունում է այս դերբայի բայական հասկացություն լինելը և խնդրին մոտենալով շարահյուսական տեսանկյունից՝ այն կոչում է «*ենթակայական*»: Այսպիսով՝ ենթակայական դերբայը դադարեց «*ներկա դերբայ*» համարվելուց և ընդունվեց որպես առանձին, ինքնուրույն դերբայ: Իմաստային տեսակետից ենթակայական դերբայն ունի այն յուրահատկությունը, որ կարող է դրսևորել միաժամանակ և՛ գործողությունը, և՛ գործողը, այսինքն՝ այն միաժամանակ ունի բայական և անվանական հատկանիշներ: Գրաբարում ենթակայական դերբայի բայական կողմը թույլ է եղել, ինչի պատճառով այս դերբայների մի մասն արդի հայերենում արդեն վերածվել է գոյականների: Գրաբարում ենթակայական դերբայի բայական հատկանիշի պակասը փաստում է այն, որ ենթակայական դերբայը ոչ թե ուղիղ խնդիր է ընդունում, այլ սեռական հոլովով դրված հատկացուցիչ: Բերենք օրինակներ քննվող բնագրից՝ ... հայեցեալ յելս գնացից նոցա, *մմանօղք* եղերուք հաւատոցն(82): Այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն...եւ *լսող* շնորհապատում վարդապետութեանն (144): Ենթակայական դերբայը գրաբարում կազմվել է *-ող, -աւող(օղ), -իչ* (նաև *-ի*) մասնիկներով: *-Ող* և *-օղ* մասնիկների զանազանության վերաբերյալ տարբեր կարծիքներ են հայտնվել: Գրաբարի քերականներից Գ. Ավետիքյանը սրանցից հիմը և ընտիրը համարում է *-ի*-ով գրությունը, իսկ Ն. Մառը՝ հակառակը. ընտիր է համարում *-աւ(օ)*-ով ձևը⁴: Ա. Աբրահամյանն այս կարծիքներից ոչ մեկը չի ընդունում և

³ Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 101:

⁴ Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 228:

գրում է. « Այստեղ հարցն ընտիր կամ անընտիր լինելով չի որոշվում»⁵: Թ. Շահվերդյանը կարծում է, որ ծագմամբ **-ող**-ը ավելի հին է⁶: Իսկ **-իչ** և **-ող(ող)** մասնիկների զանազանությունն այն է, որ **-իչ**-ով կազմված բառերի դերբայական նշանակությունը թույլ է, թեև երկուսն էլ սեռականով խնդիր են առնում: Ենթակայական դերբայը գրաբարում խիստ սահմանափակ կիրառություն ունի, և այդ պակասը լրացվում է մի քանի միջոցներով.

1. Ենթակայական դերբայի **-ող(ող)**-ով ձևին զուգահեռ գրաբարում գործածվում է **-իչ** մասնիկով դերբայական ձևը, որն ավելի սովորական է ու տարածված: **-իչ** մասնիկով ենթակայական դերբայի վերաբերյալ Յր. Աճառանը գրում է. «...**ող** մասնիկի փոխարեն իբրև ավելի ընտիր հայերեն գործածվում է **-իչ** մասնիկը, որ ընդհանրապես դրվում է ներգործական բայերի վրա, ինչպես՝ արարիչ, կեցուցիչ, տուիչ, վարիչ, առաքիչ, ստացիչ, տածիչ, տանջիչ, կիզիչ, բնակիչ և այլն: Անցողական(պատճառական) բայերը միշտ կարող են ստանալ **-իչ** մասնիկը, ինչպես՝ գնացուցիչ, զովացուցիչ»⁷: **-իչ**-ով ձևն ունենում են հիմնականում ներգործական և պատճառական բայերը: Չեզոք սեռի բայերից հազվադեպ գործածություններ կան՝ **բնակիչ**: Կրավորական սեռի բայերն ընդհանրապես ենթակայական դերբայ չեն ունենում: Սրա հիման վրա Թ. Շահվերդյանը եզրակացնում է, « որ **-ող** և **-իչ** մասնիկները ոչ միայն դերբայ կազմող մասնիկներ են, այլև եղել են սեռազատիչ մասնիկներ, այսինքն՝ ներգործական նշանակություն են ունեցել: Հենց այդ է պատճառը, որ կրավորական սեռով ենթակայական դերբայ չկա, իսկ չեզոք սեռով կազմվածները հազվադեպ են ու բացառություններ»⁸: Այն, որ **-իչ** մասնիկով կազմվող ձևերը դերբայ են եղել, երևում է նրանից, որ սրանց ծագման հիմքը բայահիմքն է, այսինքն՝ բոլորն էլ առաջանում են բայահիմքից և ըստ բառակազմության՝ **-ող** մասնիկով կազմված դերբայների հետ նույն մակարդակի վրա են: Գրաբարի **-իչ** մասնիկով ենթակայական դերբայն աշխարհաբարում բայական իմաստով չի գործածվում: Բացի այդ՝ **-իչ** մասնիկն արդի հայերենում հանդես է գալիս որպես բառակազմական կենդանի ածանց և կազմում է նոր բառեր, ինչպես՝ դյութիչ, երգիչ, նկարիչ, հրապուրիչ և այլն: Կորյունի երկում կան **-իչ** մասնիկով դերբայական ձևերի գոյականի և ածականի անցման օրինակներ՝ Ել

⁵ Ա. Արրահամյան, նույն տեղում, էջ 228:

⁶ Թ. Շահվերդյան, Գրաբարի դերբայները. ձևաբանություն և շարահյուսություն, Երևան, 2001, էջ 100:

⁷ Յր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ. 5, Երևան, 1965, էջ 25:

⁸ Թ. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 106:

գրեա՛ ի նմա **գրչաւ** դպրի(102): **Ջամենափրկչին** Յիսուսի անուն կրեաց յան-
ծին (126): Ձոր եկեալ կատարեաց **ամենափրկիչն** Քրիստոս (104):

2. Ենթակայական դերբայի իմաստը գրաբարում արտահայտվում է նաև երկրորդական նախադասությամբ դիմավոր ստորոգյալով: Բերենք օրինակներ Կորյունի երկից՝ Շնորհք Աստուծոյ, **որ** յամենայնի **հռչակ հարկանէ** զմենք ի Քրիստոս (78): Խորհուրդ առնէր այնուհետեւ վասն կէս ազգին Չայոց, **որ էր** ընդ իշխանութեամբ թագաւորին Յռոռմոց (112): ...ի նշանաւոր գիտակացն քաղելով զհամառօտս կարգեցաք, **որ** ոչ միայն մեզ, այլ եւ որ մատեանս **ընթռնուն**՝ յայտնի է(146): ...Յայդ խորհեա՛ եւ ի դոյն յամեսջիր. զայդ եթէ առնիցես, եւ զանձն ապրեցուցես, եւ զայնոսիկ, **որ** քեզն **լսիցեն** (124):

3. Ենթակայական դերբայի իմաստը հաճախ դրսևորվում է այլ դերբայ-ների միջոցով.

ա. **-ի** մասնիկով ապառնի դերբայի միջոցով՝ ... տեսանէք **բերելոյն** (բե-րողի) թախծութիւնն (100): Անդ էր...ակնավայել տեսիլ **հայելոյն** (նայողին) (104): ...լցեալ հոգեւոր մխիթարութեամբ՝ կարծեալ **զընդունելեացն** (ընդու-նողների) յուսով ուրախութեան (100):

բ. Ենթակայական դերբայի իմաստն արտահայտվում է նաև անցյալ դեր-բայի միջոցով: Բերենք օրինակներ՝ ...Ջընդելական ողջոյնն սրբոյն Սահակայ եւ ամենայն **պատահելոցն** (պատահողներին) տուեալ (12): Ամենայն**մատուցե-լոց** (մոտեցողներին) առ նա՛ զնոյն պատուիրեալ գուշակէր (134): ...Այլեւ զայ-լոց **մատուցելոցն** (մոտեցողների) գովէ զհաւատոցն ճշմարտութիւն (78): ...Այլ եւ զկնի **եկելոցն** (եկողների) զմիածնի որդւոյն Աստուծոյ փրկչին ամենեցուն... (78):

4. Ենթակայական դերբայի իմաստն արտահայտվում է նաև ածանցմամբ՝ **վայելուչ** (112), **տեսուչ** (108), և բառաբարդմամբ՝ **անուանակիր** (78), **աշխարհակեցոյց** (104), **աւետաբեր** (100), **թագաւորակաց** (114), **լուսաբեր** (78), **խրատտու** (76), **հայերէնախօս** (104), **հրամանաբեր** (100), **հրամանակատար** (140), **ճշմարտահաւատ** (110), **յառաջիմաց** (110), **պարզախօս** (102), **վարձա-հատոյց** (74), **քաղցրուսոյց** (130), **օրէնսուսոյց** (104): Եթե այս բարդ բառերի բաղադրիչներն անջատենք, ապա կստանանք երկու բառեր, որոնցից վերջինը կարտահայտվի ենթակայական դերբայով, իսկ առաջինը կլինի նրա լրացումը՝ **խրատտու**- խրատ տվող, **հրամանակատար**- հրամանը կատարող, **անուանա-կիր**-անունը կրող և այլն: Գրաբարում ենթակայական դերբայի **—ող(օղ)** վեր-ջավորությունը դրվում է թե՛ ներկայի, թե՛ անցյալ կատարյալի հիմքի վրա: Կորյունի երկուն **—ող(օղ)** վերջավորությամբ ենթակայական դերբայ ունեն ե-

րեք բայեր, որոնք կազմվել են ներկայի հիմքից՝ *լսեմ-լսող (144)*, *հանդուրժել-հանդուրժող (146)*, *մմանիմ-մմանող (82)*: Ենթակայական դերբայի *—իչ* վերջավորությունն ավելանում է և՛ ներկայի, և՛ անցյալ կատարյալի հիմքերին՝ *աւետարանիչ (106)*, *բնակիչ (88)*, *գրիչ (98)*, *թարգմանիչ (70)*, *խրատիչ (74)*, *կատարիչ (82)*, *փառաբանիչ (112)*, *փառաւորիչ (134)*, *փրկիչ (128)*, *քաջալերիչ (146)*: Անցյալ կատարյալի հիմքից է կազմվել պատճառական բայերի ենթակայական դերբայը՝ *զգուշացուցիչ (124)*, *թշուառացուցիչ (116)*, *հաշտեցուցիչ (130)*:

Ենթակայական դերբայը հոլովվում է եզակի և հոգնակի թվով, *ի-ա* խառն հոլովմամբ, նախադասության մեջ կատարում է զանազան պաշտոններ: Կորյունի երկուն ենթակայական դերբայի *—ող(ող)* մասնիկով տարբերակը շարահյուսական կիրառությունների բազմազանությամբ աչքի չի ընկնում և հանդես է եկել հետևյալ շարահյուսական պաշտոններով. 1. Ուղղական հոլովով դրված ենթակայական դերբայը դարձել է ստորոգելիական վերադիր *եմ* և *լինիմ* հանգույցներով՝ Քանգի *չէաք* իսկ *հանդուրժողք*՝ զանեմայն արարեալսն կտակաւ նշանակել զհւրաքանչիւսն (146): ...Այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն...եւ *լսող* շնորհապատում վարդապետութեանն (144): Յիշեցէք՝ զառաջնորդս ձեր, որք խօսեցան զբանն Աստուծոյ. հայեցեալ յելս գնացից նոցա, *մմանողք եղերուք* հաւատոցն (82): 2. Ուղիղ խնդիր՝ Այլ եւ *մմանող* իւր եւ Տեառն ստիպէ լինել (80): 3. Հատկացուցիչ՝ ...ամփակ բերանով՝ զվտակս վարդապետութեանն ի սիրտս *լսողացն* ծաւալեցուցանէր (130):

Ենթակայական դերբայի *—իչ* մասնիկով տարբերակը հանդես է եկել հետևյալ պաշտոններով. 1. Սեռականով ենթակա՝ իսկ *թարգմանչացն* հասեալ՝ ուր առաքեցանն...անցեալ գնային ի կողմանս Յունաց (122): 2. Որոշիչ (Նախադաս դիրքում)՝ Ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ *փրկչին* մերոյ *Յիսուսի Քրիստոսի* մօթեաց (128): ...Ազդ առնէին ճշմարտահաւատ *փառաւորչացն Սահակայ եւ Մաշթոցի* (134): Հայեցարուք, ասէ, ի զօրագլուխն հաւատոց, եւ ի *կատարիչն Քրիստոս* (82): Եւ իբրեւ ոչինչ գտանէր հնարս յուղղութիւն ածելոյ, առեալ ի գործ արկանէր *զթշուառացուցիչ գաւազանն* (116), ետադաս դիրքում՝ ...Եւ բազում *թուղթս* խրատագիրս եւ *զզուշացուցիչս* ընդ ամենայն գաւառս առաքէր (140): ...Մամաւանդ զի ունէին *պատուիրանս զզուշացուցիչս* յաստուածակարգ պատգամաւորացն (124): Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելոյն սրբոյն *Մաշթոցի վարդապետի* մերոյ *թարգմանչի* ի Կորին վարդապետէ յաշակերտէ մորին (70): Ասացաք ոչ ի պատիւ ինչ սրբոցն Աստուծոյ, այլ *յօրինակ քաջալերիչ*՝ հոգեւոր ծննդոց իւրեանց (146):

Անդ աղօթք աղերսալիք, եւ *խնդրուածք հաշտեցուցիչք* վասն ամենեցուն կենաց՝ առ մարդասերն Աստուած (130): 3.Հատկացուցիչ՝ Որ եւ սկսան իսկ սիւնք եկեղեցւոյ միջամուխ ձեռամբ *զգործ աւետարանչացն* Քրիստոսի գործել... (106): Որ եւ գրեցաւ *ծեռամբն* այնորիկ *գրչի*, հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրութեան (98): 4.Ուղիղ խնդիր՝ Եւ անդէն ի նմին քաղաքի *գրիչ* ոմն հեղինական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ (96): Միով աստուածաբարբառ պատգամօքն մի ազգ կապեալ՝ *փառաբանիչք* միոյ Աստուծոյ յօրինէր (112): ...Ուր եւ ուսեալք եւ տեղեկացեալք, *թարգմանիչս* կարգէին ըստ հեղինական լեզուին (122): Որ եւ ձեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով զմանկունս *գրիչս* նմին դպրութեան (98): 5.Ստորոգելիական վերադիր՝ Յորոց եւ հօր թագաւորացն *խրատիչք* էին, զաշխարհական կենցաղոյս զհանգամանս ցուցանէին... (74): 6.Հանգման անուղղակի խնդիր՝ Որոյ ազատութիւնն յերկինս է, ակն ունել *փրկչին* մեծին Աստուծոյ (82): Այսպիսով՝ ամփոփելով ապառնի և ենթակայական դերբայների մասին ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկուն դրանք խաղացել են գործուն դեր իմաստաբանական և շարահյուսական առումով:

Բանալի բառեր - ապառնի դերբայ, ներկա դերբայ, Կորյունի «Վարք Մաշտոցի» բառակազմական բնութագիր

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Երևան, 1974:
2. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:
3. Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:
4. Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 5, Երևան, 1965:
5. Այտընեան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987:
6. Բարսեղյան Հ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:
7. Բիւզանդացի Ն., Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1900:
8. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981:
9. Մկրտչյան Էդ., Ստորոգյալի կազմությունը և արտահայտությունը գրաբարում, Բանբեր Երևանի համալսարանի, 2005, 2, էջ 40-50:
10. Մինասեան Մ., Յատկացուցիչ- յատկացեալ կապակցութիւնը գրաբարում, Երուսաղեմ, 1974:

11. Շահվերդյան Թ., Գրաբարի դերբայները, ձևաբանություն և շարահյուսություն, Երևան, 2001:
12. Ջահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974:
13. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի անդեն բայերը (դերբայները), Բանբեր Երևանի համալսարանի, 1975, 3, էջ 40-54:
14. Քոսյան Վ., Գրաբարի բառակապակցությունները, Երևան, 1980:

МОРФОЛОГО-ФУНКЦИОНАЛЬНАЯ ХАРАКТЕРИСТИКА ПРИЧАСТИЙ В СОЧИНЕНИИ КОРЮНА “ЖИТИЕ МАШТОЦА”

С. А. ГРИГОРЯН

Кандидат филологических наук, доцент

Языковыми особенностями сочинения Корюна „Житие Маштоца„ считаются причастные обороты и предложения с причастиями, представляющие особую важность для исследований, посвященных грамматическому строю армянского языка. Причастия выполняют номинативную и глагольную функцию и разную синтаксическую роль.

THE FORMAL-FUNCTIONAL CHARACTERISTICS OF FUTURE AND SUBJECTIVE PARTICIPLES IN KORYUN’S WORK “MASHTOTS’S LIFE”

S. A. GRIGORYAN

Candidate of Philology, Associated Professor

Participial combinations and sentences, which had great importance in the investigations devoted to the grammatical structure of Armenian, are considered to be the linguistic peculiarities of Koryun’s work. The present and future participles have verbal and nominal functions and different syntactic positions.